

Տոկոսադրամը հանեալը ի ռոճկաց Ուսուցչաց	48	84
Տուգանք հանեալը ի ռոճկէ ուսուցչի մարդանեանց	2	
Ի տարեկան վարժ ժամագործի	24	
Դրամը մատուցեալը Աստրախանայ քաղաքային հասարակական դրամատան	1200	
Ի զին վառելափայտի	95	
Եօթն հատ սերի բիլէթը վասն դարձուցանելոյ ի պատրաստական գումար	530	
Դրամը յանձնեալը Հոգաբարձուի Պարոն Սողոմոնեանց ի պէտս շինութեան Ս. Գէորգեան դպրատան	155	76
Ի զին հանդերձից եւ կօշկաց աղքատ երկսեռ աշակերտաց	442	

Գումար 6908 254 2

Ըստ այսմ առ մէկն Յունվարի 1874 ամի մնան՝ մի դրամատոմսակ Վաճառականական դրամատան տուեալ յ2 Սեպտեմբերի 1872 ամի համ. 2047, գումարաւ մի հազար թուրքի, մի դրամատոմսակ քաղաքական հասարակական դրամատան տուեալ ի 1 Նոյեմբերի 1873 ամի համ. 66, գումարաւ մի հազար երկու հարիւր թուրքի, երկու դրամատոմսակ առաջնոյ եւ երկրորդի ներքին փոխառութեան 1864 եւ 1866 ամաց, համարք սերիի առաջնոյն 09348, եւ երկրորդին 42075, եւ տոմսակաց առաջնոյն 4, եւ երկրորդին 57, գումարաւ երեք հարիւր տասն եւ հինգ թուրքի, եւ պատրաստական դրամը յիսուն եւ երկու թուրքի վաճառն եւ երեք եւ մի քառորդ կոպէկ, ընդ ամենն երկու հազար հինգ հարիւր վաճառն եւ եօթն թուրքի՝ վաճառն երեք եւ մի քառորդ կոպ. արծաթի:

ՄՇԱԿԻ ԸՆԹԱՅԲԸ.

Մի Ռուս մատենագիր ազգայնութեան հարցի վերայ խօսելիս յայտնում է այն միտքը, « թէ կան մարդիկ, որոնք բացասական ձևով են վարվում իւրեանց ազգի և հասարակութեանց հետ. այսպիսիք չեն հաւատում նոցա զօրութեանց, և խորհուրդ են տալիս դէն ձգել իրանց ազգային յատկութիւնքը և ընդունել օտարինը, որովհետեւ սոքա ընդհանուր մարդկային են. Այսպիսի անձինք կսիրեն էլ իրանց ազլը և կկամենան ներան և լուսաւորել; բայց նոցա սէրը ատելութիւնից էլ վատթար է, որովհետեւ նորա հետեանքը ազգի անհատական յատկութեանց ջնջումն է, »

Մեր մէջ դեռ ևս այսպիսի անձինք գոնէ զրահանական հանգէտում երեցած չէին, բայց ահա այս վերջին երկու տարիներում երեցաւ այս երեւոյթը Մշակի մէջ: Մշակը բացասեց և բացասում է ազգի մէջ ամեն բան, բացի իրանից, ժողովրդեան ամեն զստակարգերի ոյժը մերժեց, առաւելապէս եկեղեցականաց յարգն ու նշանակութիւնը վայր ձգել աշխատեց, մինչև անգամ

ամբողջ ազգն ու հասարակութիւնը ստորագասեց վայրենիներից անգամ ստոր, եթէ իրան 1000 ստորագորդ չեն տալ ու սպառնաց, որ հակառակ դէպքում կթողնէ այս երկիրը. բայց ինքը ինչ տուեց ազգին մինչև ցայժմ, դորա համար խօսք չկայ:

Յօդուածիս նպատակը պիտի դնեմ իբրեւ եկեղեցական, նորա բռնած ընթացքը դէպի եկեղեցական դասը: Մշակի յարգոյ խմբագիրը, ինչպէս երևում է, բոլորովին անտեղեակ ազգի անցեալին և ներկային, և իբրեւ լոկ եւրոպեամոլ կամենում է ազգի բոլոր հաստատութիւնքը ձևակերպել օտարի ձևերով, մոռանալով՝ որ ամեն ազգ իւր առանձին յատկութիւնքը ունի. Ասացինք անգէտ ազգի անցեալին և այն մինչև այն աստիճան, որ զրահանութեան վերայ խօսելիս (տես Մշակի 1873 № 50) պախարակում է եկեղեցականքը, որ նոցանից և ոչ մի անձն գուրս է եկած զրահանական հանգէտը:

Այս ցոյց է տալիս, որ Մշակի Պ. խմբագիրը բոլորովին ծանօթ է Հայ դրականութեան, որոյ ներկայացուցիչներն կարգում աշխարհականները շատ քիչ բացառութիւնք են կազմում: Այս ճշմարտութեան մէջ համադրած լինելու համար հարկաւոր էր շատ վեր ի վերոյ ծանօթութիւն ունենալ Հայ դրականութեան պատմութեան հետ: Հերիք էր միայն գիտենալ Հայ դրականութեան ծաղկեալ ժամանակամիջոցների գլխաւոր մատենագիրների անունները, որ չընկնէր այդ սխալի մէջ:

Մշակը չգիտեմ որ շարժառիթից զրգած կամ ինչ նպատակով երկու տարի կանոնաւոր կերպով աշխատում է յարձակել բոլոր Հայ կղերի վերայ, ճգնում է սորա նշանակութիւնը Հայ ժողովրդեան առաջ վայր ձգել, կամենում է այս երկու դասակարգի մէջ փոխանակ սէր և միաբանութիւն հաստատելու, որ եկեղեցւոյ և ազգի օգուտն է, բաժանումն ձգել և անմիաբանութիւն, որ գուցէ իւր նպատակին հասնի (Մաքիաւելին ասում է « բաժանեալ, զի տիրեցես »): Սորա համար Մշակը ջանաց Հայ եկեղեցական դասի մէջ կղերականութիւն տեսնել, չամաչեց ազատ Հայ Եկեղեցուն վերաբերել այն, ինչ որ նա չէր կարող ըստ ունենալ, այն է մի քաթողիկ կղերականութիւն, որ իւր շահերը ունի հակառակ ժողովրդեան շահերին: Մշակը Հայ Եկեղեցական դասը նմանեցնելով և հաւասարելով քաթողիկ կղերականութեան, կամեցաւ նորա դէմ վերջով ժողովուրդը և հալածել նորա իրրեւ փնասակար դասակարգ, ինչպէս վարվում են Եւրոպայում ժողովրդավէաս քաթողիկ կղերականութեան դէմ:

Մեղուն հասկացաւ նորա միտքը—հարուածիլ նրան, ցոյց տալով, որ Հայ Եկեղեցին ո՛չ ունեցիլ է և ո՛չ էլ կարող է ունենալ կղերականութիւն, լինելով ազատ և ժողովրդական Եկեղեցի, և թէ Մշակի այդ բռնած ընթացքը բարեմիտ չէ ու փնասակար է ազգին:

Մշակը զարհուրեց, տեսնելով, որ բացվում է իւր ընթացքը և նպատակը, ուստի ժողովրդի միտքը մոլորեցնելու համար սկսաւ գործին անձնականութեան ձեւ տալ, թողեց կղերականութիւն խօսքը, չպատասխանեց Մեղուն առաջ բերած

փաստերին և սկսաւ յարձակել նորա խմբագրի և գործակիցների վերայ և մինչև անգամ խեղազար անուանեց նրանց:

Մշակը յաջողեցաւ մասամբ միամիտների աչքում իւր նպատակի մէջ, ինչպէս երևեցաւ այն նամակներից, որոնք տպվեցան Մեղուն և Մշակի մէջ և որոնք յորդորում էին երկու խմբագրութեանց էլ թողնել անձնական վէճերը, որոնց և պատասխանեց Մեղուն առաջնորդող յօդուածով և ցոյց տուեց, որ իրանց վէճերի շարժառիթը անձնականութիւնը չէր, այլ կղերականութեան և ազգայնութեան հարգերն էին, որոնց վերաբերութեամբ Մշակը փնասակար ընթացք էր բռնել:

Մշակը թողեց կղերականութիւն խօսքը, բայց իւր նպատակը չթողեց, այն է ատելութեան և բաժանման սերմ սերմանել Հայ եկեղեցական դասի և ժողովրդեան մէջ: Եւ այս նպատակով մազի թելի վերայ կախ ընկած իւր վարկը վերականգնելու համար, որ ազգի կարողնայ, սկսաւ ձեւանալ Հայ եկեղեցւոյ հարազատ զաւակ, ցաւակցութիւն ցոյց տալ նորա դրութեան վերայ և առաջ բերեց « Եկեղեցի և ժողովուրդ », յօդուածը:

Այս յօդուածի մէջ առաջ բերեց Լուսաւորչի, Սահակ Պարթևի, Խորենացւոյ և ինչ, և ինչ, խնկիլի անունները, որոնք թէ և օտար երկիրներում ուսումն էին առել, բայց Եկեղեցւոյ սիրներն դառան, իրրեւ թէ և ամեն օտար երկիրներում ուսումն առածներն էլ նոցա նման են, չը յիշելով այն հանգամանքները, որոց մէջ նոքա զարգացան և այն հանգամանքները, որոնց մէջ ներկայ Հայ երիտասարդների մեծ մասը զարգանում է:

Մշակը վերջիշեալ տօնելի անձանց հետ համեմատելով իրան՝ իւր վարկը վերականգնած համարեց, ուստի և սկսաւ շարունակել իւր նպատակը այլ ձևով միայն: Նա սկսաւ գոռալ, թէ Հայոց Եկեղեցին սուրբ է, անարատ է, ազատ է և ինչ, և ինչ, ժողովրդեան սէրն և եռանդը դէպի նա ջնրմ է, այլ սառն է միայն դէպի հոգեւորականները, որովհետեւ սոքա տգէտ են առանց բացառութեան, յախշտակող են, արծաթաւոր, ցոյ

և անընդունակ թէ եկեղեցի և թէ դպրոց կա-
ռաւարկու համար: Բայց ինչից է հետեւեցնում
Մշակի Պ. խմբագիրը իւր եզրակացութիւնները.
արդեօք նրանից, որ Հայ եկեղեցիները (Տփլիսայ
նկատմամբ) թափուր են ժողովրդից և մինչև ան-
գամ նշանաւոր Աղգային կրօնական տօներին եկե-
ղեցիներում չեն երևում նորա հարազատ զա-
ւակներ կոչվողները, այն ինչ սոքա լցնում են
Թիֆլիզի պանդոկները և նոցա շէմքերը գիշեր և
ցերեկ մաշում: Արդո՞ք է Մշակը մեկնել, թէ
ինչ նշանակ է եկեղեցին առանց եկեղեցական
զասի:

Ի՞նչ կնշանակեն Մշակի մէջ այն բազմաթիւ
լուրերը, նամակները և միմեանցից հեռու յօ-
դուածները — որ նոցա մէջ կապը չնկատուի, ու-
րոնք ազդու ձեւով և բաց գոյներով նկարագրում
են եկեղեցականների թերութիւնը, այն ինչ երբ
որ և իցէ լրի ստութիւնը բացվում էր թէ Մշա-
կը շատ չոր ու ցամաք ձեւով յայտնում էր, թէ
Մշակի այս ինչ համարում տգած լուրը ստոյգ չէ:

Մեր ժողովրդեան ընթերցող անդամների մեծ
մասը սովոր չէ որ և իցէ լրագրի ուղղութիւնը
նկատելու, այլ միշտ մնում են աւելի իւրաքան-
չիւր յօդուածի ազդեցութեան ներքոյ և այսպէս
Մշակը հասնում է իւր նպատակին, այն է նորա
յօդուածների ազդեցութեամբ փոքր առ փոքր
սերմանվում է և աճում ժողովրդեան մէջ ա-
տելութեան սերմը, դէպի եկեղեցական դասը:
Մշակը երևում է միամիտ ընթերցողների աչքին
ճշմարտախօս ոմն, իսկ նորա վնասակար նպա-
տակը ծածուկ է մնում: Ըստ սխալում է
Մշակը, եթէ կարծում է, թէ չեն հասկանում
իւր նպատակն ու ուղղութիւնը: Մշակը պիտի
խմանայ, որ Մաքիավելիականութիւնը հին և մա-
շուած ձև է: Ամեն փոքր ի շատէ խորհող և
հասկացող անձն հեշտութեամբ կառնու. նորա
հոտը: Ի զուր է Մշակը այդ միջոցը (բաժանեա
ղի տիրեցես) գործ է դնում թէ եկեղեցական-
ների, թէ ներսիսեան գպրոցի վարչութեան և
թէ այլ հարցերի մէջ: Մաքիավելիականութեան
ոյտուղը ներկայումս կարող է լինել միայն նրան
գործ դնողի խայտառակութիւնն և վնասակա-
րութիւնը:

Այս անգամ այսքանովս բաւականացած,
յայտնում եմ Մշակին, որ սխալվում է նա,
եթէ կարծում է, թէ Հայ եկեղեցական դասը
յիւրաւի այնքան տգէտ է, որ չէ կարող ճանա-
չել Մշակի և նորա նմանների ընթացքը և ուղ-
ղութիւնը, ուստի և զգուշացնում եմ նրան
թողնել այդ իւր միջոցը իւր նպատակի համար
և ձեռք առնել մի այլ նոր միջոց, որովհետեւ
հնարագէտ է երևում: Այո՛ւսամ որ մեր գրա-
կանական յարաբերութիւնը Մշակի հետ կշա-
րունակուի:

Գ. Եկեղեցական ՈՄԵ.

Ի 11-2 Փետրվ 1874 - թ.

ՏԻՖԼԻՍ

Այս յօդուածը անկողմնասէր ողբով
հրատարակելէ զինի՝ կարեւոր կհամարվիք
յայտնել զե ինչպէս Տփլիսէն, նոյնպէս
Գանձակէն, Ախալաթիւնատարէն, Ն. Նա-
խիջևանէն և այլ մի քանի քաղաքներէն
թէ հոգեւորականաց և թէ աշխարհակա-
նաց ստորագրութեամբք այլ և այլ գրու-
թիւնք և յօդուածք կտեղան Արարատայ
Խմբագրութեանս՝ զրեթէ բոլորն ընդ-
դէմ Մշակ լրագրոյ, որոց մէջ կան նոյն իսկ
Մշակի Խմբագրապետի անձին դէմ ծանր
ակնարկութիւնք՝ (որք Տփլիսէն խըր-
կուած են), սակայն ցարդ ոչ հրատարա-
կած եմք և ոչ պիտի հրատարակեմք սան-
ձարձակ և անձնականի ակնարկող գրու-
թիւնքը՝ որքան ևս իրաւացի լինին, ուս-
տի կկնդրուի նամակադիր և յօդուածա-
գիր եկեղեցականներէն և պարոններէն՝ զի
յաւէտ ջանան առանց կրից համեստ և
ճշմարտապատում գրութիւնք և յօ-
դուածներ ուղղել Խմբագրութեանս,
ապա թէ ոչ՝ անտիպ կմնան, միանգա-
մայն պէտք է գիտնալ զի Խմբագրութիւնս
երբէք պարտաւոր չէ չհրատարակուած
յօդուածները վերադարձնել:

Այս առթիւ կինդրուի նա և թէ Մի-
ղուի և թէ Մշակի Խմբագրութիւններէն,
գիտքան կարելի է՝ ջանան իւրեանց հրա-
տարակութեանց մէջ զգուշութիւն և

ընտրութիւն գործածել, և մի՛ անօգուտ
վէճեր՝ յուզմունքներ՝ և անուանարկու-
թիւնք զրգուել :

ԲԱԳՈՒԱՅ ՄԱՐԳԱՍԻՐ. ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷ

Բազուայ Մարգասիր. Ընկերութեան Խորհրդարանէն խնդրուած է հետեւեա-
լին հրատարակութիւնը Արարատ ամսագրոյ մէջ ևս :

Հաշիւ-հաշիւ և ելից Բո-ճարայ պահանջելոյ Մարտիտիւն Ընկերութեան յանդէս
Սեփն Գրեգորի Բ. Ընդունելի Լաւ 1873 թի :

ՄՈՒՏՔ

	Ռ.	Կ.
Առ 1 ն Յունվարի 1873 ամի Ընկերութիւնն ունէր բաց ի շինութեան, տպարանի և մուր- հակներով ապստիկ ստանալի դրամոց, զուտ զումար	5784	42
Երկրորդ փոխարինութեան 50 ⁰ / ₁₀ բիլէթներ 42 հատ, հաշուելով իւրաքանչիւրն 103 մանէթ		
50 կոպէկից, ընդ ամենը	4702	50

ԵԿԱՄՈՒՏ ՅԸՆԹԱՅՍ 1873 ԱՄԻ

Նորոգ դռնալ 45 անփոփոխ անդամներից	1400	
47 տարեկան անդամներից	95	
Տպարանական արդիւնք, սկսեալ ի 1 էն Յունվարի մինչ ց 1 ն Մարտի 1873 ամի	46	64
Սկսեալ ի 1 էն Մարտի մինչ ց 1 ն Յունվարի 1874 ամի, Ընկերութեան պատկանեալ տպա- րանից, որ տված էր Պարոն Աստուածատուր Թարվիզեանցին գապարաւ, իւրաքանչիւր տարի 550 մանէթով, — ստացաւ	450	
Ընկերութեան աշակերտութեանց ձեռագործների վիճակախաղութիւնից, որ եղել հարցաբըն- նութեան օրն, մոտաւ արդիւնք	204	25
Առանձին ընծայաբերութիւն յօգուտ Ընկերութեան, բարերար անձանցմէն, ընդ ամենը	95	
Ընկերութեան պատկանեալ շինութեանց՝ այս ինքն մէկ պողպալից վարձ	24	
Յընթաց 1873 ամի տոկոսիք զուտ դրամից՝ այս ինքն 5784 մանէթից	700	
Ընկերութեան պատկանեալ 43 հատ խաղարկական բիլէթներից տոկոսիք	575	
Ընդ ամենը	45877	84

ԵԼՔ ՅԸՆԹԱՅՍ 1873 ԱՄԻ

Օրիորդաց Ուսումնարանի երկու վարժապետաց Ռուսաց և Հայոց լեզուի տարեկան վարձ	457	44
Ուսումնարանի պահապանին	60	
Տպարան մինչ ց կապարաւ տալն, վարձու ունեցած դրաշարներին տված է չհատուցած վարձն	400	
Տպարանական ծախս է եղած, մինչ ց 1 ն Մարտի 1873 ամի	55	60